# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Կրտսեր դպրոցականների նախագծային գործունեության կազմակերպումը մայրենիից»


Հետազոտող ուսուցիչ՝ Աննա Ազաջանյան

անուն, ազգանուն

«Վ.Համբարձումյանի անվան թ.12 հիմնական »

դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Ելենա Ջիլավյան

անուն, ազգանուն


Երևան- 2022

# Բովանդակություն

Ներածություն……3

Նախագծային ուսուցման մեթոդը……4

Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպումը կրտսեր դպրոցում……8

Հետազոտության արդյունքների վերլուծություն……12

Եզրակացություն……16

Օգտագործված գրականության ցանկ……18

# *Ներածություն*

Մարդու հաջողությունները մեծ մասամբ որոշվում են իր կյանքը որպես նախագիծ կազմակերպելու ընդունակությամբ. որոշել հեռավոր և ամենամոտ հեռանկարները, գտնել և յուրացնել անհրաժեշտ ռեսուրսները, փոխել գործունեության պլանը և իրականացնելով այն գնահատել, թե արդյո՞ք հաջողվել է հասնել դրված նպատակին: Աշխարհի մասշտաբով կատարված բազմաթիվ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ժամանակակից քաղաքականության, սպորտի, բիզնեսի, արվեստի առաջատարների մեծ մասն ունեն նախագծային մտածողություն: Այսօր դպրոցում առկա են բոլոր հնարավորությունները մտածողության այս ձևի զարգացման համար, որն իրականացվում է սովորողների գործունեության հատուկ տեսակի՝ *նախագծային գործունեության կազմակերպման միջոցով*: Դպրոցում առարկաների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող աշակերտների հետ ուսուցիչները շատ հաճախ տարբեր տիպի աշխատանքներ են իրականացնում: Դրանցից են առարկայական օլիմպիադաները և ինտելեկտուալ խաղերը: Սեկ այլ ձև է աշակերտների հետազոտական և նախագծային գործունեության կազմակերպումը: Ակնհայտ է, որ կրթական բարեփոխումների գլխավոր արդյունքն այսօր պետք է չինի դպրոցն ավարտող երիտասարդի, ինչպես իր, այնպես էլ հասարակության բարեկեցության համար անձնական պատասխանատվություն կրելու կարողությունն ու պատրաստակամությունը: Դրա համար դպրոցի գործունեության ռազմավարությունը պետք է ուղղված չինի զարգացնող կրթությանը, որի ընթացքում ուսուցչի և հոգեբանի ուշադրության կենտրոնը աշակերտի մտածողությունն ու ուսումնական գործունեությունն է, այլ ոչ միայն ուսուցանելու մեթոդներն ու տեխնոլոգիաները: Այս տեսանկյունից, հատկապես նախագծային գործունեությունը, ըստ իս, համապատասխանում է կրթության նոր խնդիրներին և կարող է դառնալ կրթության բովանդակության բարեփոխումների տարրերից մեկը՝ նաև դպրոցում:

Նախագծային ուսուցման կենտրոնական հասկացությունը նախագիծն է՝ սովորողի համար կենսական կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծման մտահղացումը: Բառարաններում նախագիծ բառը բացատրվում է որպես ինչ-որ փաստաթղթի կամ մտահղացման նախնական բովանդակություն, ծրագիր:

Ըստ Ա. Ն. Չայկայի ուսուցման այս տեսակը ցանկալի է այն դպրոցականների համար, ովքեր մտածված նպատակ են դրել կրթություն ստանալ հանրակրթական դպրոցի տեխնոլոգիական,

գեղագիտական և այլ պրոֆիլային դասարաններում: Սակայն նախագծային ուսուցումը զարգացնում է սովորողի ընդհանուր ստեղծագործական մտածողությունը, ինչը շատ անհրաժեշտ է կյանքի ցանկացած ուղի ընտրած երիտասարդի համար:

Կրտսեր դպրոցականի համար ուսուցումը պետք է լինի խնդրահարույց: Այն սովորողին մղելու է ինքնուրույն հետազոտական գործունեության և անհատական ստեղծագործական բնույթի որոնումների:

Այդ դեպքում կրթությունը կվերածվի ոչ թե վերարտադրողական, այլ ստեղծագործական գործունեության, ինչը կարող է նպատակաուղղվել երեխաների հետաքրքրությունները, և նրանց մեջ արթնացնել գիտելիքների իմացության ծարավ:

## Նախագծային ուսուցման մեթոդը

Նախագծային մեթոդը առաջացել է անցյալ դարի 20-ական թվականներին, ԱՄՆ-ում:

Այն կոչվում էր նաև խնդիրների մեթոդ: Հեղինակն է Ջոն Դյուին:

Նախագծային մեթոդի հիմնադիրները առաջարկում էին ուսուցման հիմք ընդունել սովորողի ակտիվ գործունեությունը՝ հաշվի առնելով սովորողի անձնական հետաքրքրությունները կոնկրետ այդ թեմայի շուրջ: Էական նշանակություն ուներ այն, որ սովորողներին առաջարկվեն իրական կյանքից վերցված խնդիրներ, որոնք կարևոր են իրենց համար: Այս խնդիրների լուծման համար սովորողին անհրաժեշտ կլինի կիրառել ինչպես մինչ այդ ունեցած գիտելիքները, այնպես էլ նոր գիտելիքներ, որոնք նա ձեռք կբերի աշխատանքի ընթացքում:

Դասավանդողի դերը նախագծի իրականացման տարբեր փուլերում կարող է փոխվել: Բոլոր փուլերում էլ նա հանդես է գալիս որպես խորհրդատու, օգնական: Նա գիտելիքներ չի փոխանցում, այլ ապահովում է սովորողի ինքնագործունեությունը, այսինքն՝ խորհուրդներ է տալիս, հետևում է ընթացքին, ուղղորդում է…

Սովորողի դերը նախագծային աշխատանքում էապես տարբերվում է. պասիվ լսողից նա դառնում է ակտիվ մասնակից, հետազոտող, գործունեություն ծավալող: Նա ազատ է գործունեության ձևի ու տեսակի ընտրության մեջ:

Ռուսաստանում նախագծի մեթոդը դեռևս հայտնի էր 1905թ.-ից: Հեղափոխությունից հետո այս մեթոդը ուսումնական հաստատություններում սկսվեց կիրառվել Ն.Ա Կրուպսկայայի անմիջական հրամանով: Սակայն մեթոդը քննադատվեց և մինչև 20-րդ դարի 80-ականները չէր կիրառվում դպրոցներում:

Ծնված լինելով ազատ դաստիարակության գաղափարից՝ այսօր նախագծի մեթոդը ժամանակակից կրթական համակարգի անբաժանելի բաղադրիչն է:

Շատ հաճախ նախագիծ են անվանում սովորողի ցանկացած ինքնուրույն աշխատանքը՝ ասենք ռեֆերատը կամ հաշվետվությունը: Այսպիսի շփոթմունքից խուսափելու համար անհրաժեշտ է տալ նախագծի հստակ սահմանումը.

*Նախագիծն ուղղված է կոնկրետ խնդրի լուծման՝օպտիմալ ճանապարհով հասնելով նախօրոք նախատեսվող արդյունքներին: Նախագիծը կարող է ներառել ռեֆերատի, հաշվետվության, հետազոտության և սովորողների ինքնուրույն ստեղծագործական աշխատանքների այլ ձևեր, սակայն բացառապես որպես նախագծի արդյունքին հասնելու միջոց:*

Նախագիծը կազմելիս օգտվում ենք կառուցվածքային մոդելի ձևից, համաձայն որի ուսումնական նախագիծն ունի ընդհանուր նպատակ, խնդիրներ, որոնց լուծման արդյունքում հասնում են ակնկալվող արդյունքների:

Գոյություն ունեն մի շարք դրույթներ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել նախագիծ իրականացնելիս:

Չենք կարող, սովորողին, նախագծի տեսքով առաջարկել աշխատանք, որի իրականացման համար նա չունի նախնական գիտելիքներ և հմտություններ: Այլ կերպ ասած, նա պետք է ունենա որոշակի պատրաստվածության մակարդակ: Նաև անհրաժեշտ է նպատակին հասնելու համար խթանիչ մեթոդներ կիրառել:

Նախագծի առանձնահատկություններից մեկն էլ աշխատանքի նախնական պլանավորումն է: Ամբողջ ընթացքը՝ սկսած ծագած խնդրից մինչև նախագծի նպատակը, անհրաժեշտ է բաժանել առանձին փուլերի՝ յուրաքանչյուրի համար իրենց ժամանակավոր խնդիրներով, պարզել այդ խնդիրների լուծման միջոցները և դրա համար ռեսուրսներ գտնել, աշխատանքի համար մանրամասն աղյուսակ կազմել, որտեղ նշված լինի յուրաքանչյուր փուլի իրականացման ժամանակը: Նախագծային աշխատանքի պլանի իրականացումը, որպես կանոն, կապված է գրականության և տեղեկատվության այլ աղբյուրների ուսումնասիրության

հետ, տեղեկատվության ընտրության հետ: Հնարավոր է նաև կապված է տարբեր փորձերի անցկացման, գիտափորձերի, դիտումների, հետազոտությունների, հարցումների, ստացված տվյալների վերլուծության, եզրակացությունների ձևավորման և դրա հիման վրա ձևավորված սեփական տեսակետի հետ: Նախագծի խնդրի լուծման և գտնված լուծման մարմնավորման համար ստեղծվում է նախագծային արտադրանք: Նախագծային արտադրանքը պետք է ունենա պարզորոշ սպառողական հատկություններ, որոնք էլ բավարարեն խնդրի հանդիպած ցանկացած մարդու պահանջները, որի լուծմանը հենց ուղղված էր տվյալ նախագիծը:

Աշակերտը պետք է գիտելիքներ ստանա ոչ թե պատրաստի ձևով, այլ դրանք ձեռք բերի ինքնուրույնաբար՝ որոնողական , հետազոտական, համագործակցային աշխատանքի արդյունքում: Ինքնուրույն գործունեության զարգազմանն են նպաստում համագործակցային ուսուցումը, ճանաչողական-որոնողական աշխատանքները, խաղային տեխնոլոգիաներով ուսուցման կազմակերպումը, ինքնագնահատման կարողությունների զարգացումը: Ուսուցչի կողմից սովորողներին հանձարարվող ինքնուրույն (հետազոտական)աշխատանքները նպաստում են սովորողի հետազոտական, ստեղծագործական, նախաձեռնողական, ինքնակազմակերպման, ժամանակի արդյունավետ կառավարման հմտությունների ձևավորմանը և հնարավորություն են տալիս նրան ինքնուրույն կամ մյուսների հետ համատեղ աշխատանքի շնորհիվ գործնականորեն կիրառել դասի ընթացում ձեռք բերած տեսական գիտելիքները և դրսևորել իրողությունները քննադատաբար ուսումնասիրելու, վերլուծելու, ստեղծագործական նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ:

***Թեմայի արդիականությունը*:**

Հետազոտական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով , որ այսօր տեխնիկայի զարգացման շնորհիվ շատ մեծ է կրտսեր դպրոցականների ինքնուրույնության և ստեղծագործ լինելու սոցիալական պահանջը, ինչպես նաև անհրաժեշտությունը՝ օգտվելու ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներից , որոնք կօժանդակեն կրտսեր դպրոցականների ինքնուրույն հետազոտական կարողությունների զարգացմանը և կհարստացնեն կրտսեր դպրոցում ինքնուրույն գործունեության փորձը:

Աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները պահանջում են մարդուց նոր մտածելակերպ. ընկալում, համագործակցային կարողություններ, նոր կոմպետենցիաներ, նոր դերեր, հմտություններ:

*Նախագծային մեթոդի առավելությունը*

- ✓ Մեծահասակների հետ համատեղ գործունեության ընթացքում երեխան ունակ է կատարել այնպիսի գործողություններ, որոնց ինքնուրույն կատարումը դեռևս անհնար է:
- ✓ Յուրաքանչյուր տարիքում կարող է բացահայտվել հիմնական, այդ ժամանակահատվածին բնորոշ, երեխաների ինքնուրույն և մեծահասակների հետ համատեղ գործունեության բովանդակությունը:
- ✓ Մեծահասակների հետ համատեղ գործունեությունը ընկալվում է որպես համագործակցություն, որը ենթադրում է կողմերի համահավասար մասնակցություն և փոխադարձ հարգանք:
- ✓ Մանկավարժը կարող է իրականացնել գրեթե բոլոր կրթական ոլորտների ինտեգրացիա
- ✓ Հետազոտական և որոնողական աշխատանքներ
- ✓ Խոսքի զարգացում և հաղորդակցում
- ✓ Խաղային գործունեություն:

*Հետազոտական աշխատանքի նպատակը:*

Կրտսեր դպրոցականի ուսումնական, իմացական, ստեղծագործական ներուժի խթանում, հետազոտական ունակությունների կատարելագործման և զարգացման, հետազոտական հմտությունների ձևավորման միջոցով:

*Հետազոտական աշխատանքի խնդիրները:*

- ✓ Տվյալները հավաքելու, մշակելու, համակարգելու, կարողությունների ձևավորում:
- ✓ Տեղեկատվությունը համադրելու, ընդհանրացնելու կարողություն:
- ✓ Ճանաչողական կարողությունները:
- ✓ Տեղեկատվական տարբեր աղբյուրներից ինքնուրույն օգտվելու կարողություն:

# Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպումը կրտսեր դպրոցում

Ինքնուրույն են կոչվում այն աշխատանքները, որոնք աշակերտները կատարում են ուսուցչի նախաձեռությամբ կամ սեփական նախաձեռնությամբ: Որպեսզի սովորողները հմտանան ինքնուրույն մտավոր աշխատանք կատարելու մեջ, անհրաժեշտ է ,որ սկզբնական փուլում դրանք իրագործվեն ուսուցչի նախաձեռնությամբ: Սովորողների ինքնուրույն աշխատանքների կատարումները պետք է ունենան փաստերը, օրենքները, օրինաչափությունները ինքնուրույնաբար ճանաչելու ստեղծագործական գործունեությունը զարգացնելու ուղղվածություն:

Որպեսզի սովորողները կատարեն ինքնուրույն աշխատանքներ, անհրաժեշտ է, որ նրանք ունենան իրենց գործողությունները , գործելակերպը հստակ իրագործելու պատկերացում: Նրանք պետք է որոշակիորեն իմանան թե ինչ աշխատանք են կատարելու, ինչ նպատակ է հետապնդում այն , ինչ խնդիրներ են լուծելու, երբ են սկսելու աշխատանքը, երբ են ավարտելու, ինչ մեթոդներ, հնարներ են կիրառելու , ինչպես են վերլուծելու ստացված արդյունքները և այլն:

Այդ ամենն իրականացնելու համար ցանկացած ինքնուրույն աշխատանք կատարելուց առաջ սովորողները պետք է ունենան օպերատիվ պլաններ , որտեղ արտացոլված լինեն , թե ինչը երբ կատարել , երբ ավարտել ու ամփոփել, արդյունքները ներկայացնել քննարկման:

Տարրական դասարանում ինքնուրույն աշխատանքի անցկացումն ունի որոշակի առանձնահատկություններ:

Փորձը ցույց է տալիս, որ ճիշտ կազմակերպված ինքնուրույն աշխատանքը պարբերաբար անցկացնելով՝ սովորողներն առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում, քան ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդման դեպքում:

Ինքնուրույն աշխատանքի անցկացումն ըստ մանրամասն մշակված մեթոդիկայի՝ արագացնում է սովորողների՝ գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը, իսկ այն իր հերթին դրականորեն է ազդում ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:

Ժամանակի ընթացքում դասերին ինքնուրույն աշխատանքի պարբերաբար կազմակերպման և տրված առարկայից տրվող տնային աշխատանքների բազմազան

տեսակների հետ դրա համապատասխանեցման դեպքում մշակվում է ինքնուրույն աշխատելու հիմնարարկարողությունները:

Ինքնուրույն աշխատանքներ կազմակերպելիս շատ կարևոր է առանձին սովորողների գիտելիքների խորացումը, գործնականում գիտելիքներդ կիրառելու կարողության, ինքնուրույն մտածելու ունակության, լարված աշխատելու սովորույթի, խոչդնդոտներն ու դժվարությունները հաղթահարելու ընդունակությունների ձևավորումը[6]:

Վերը գրվածից պարզ է դառնում, թե որքան մեծ նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում: Տարրական դասարաններում գործունեություն ծավալելու կարողության ձևավորումը, իսկ այն հնարավոր է իրականացնել սովորողների ինքնուրույն գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք:

Այն իր մեջ ներառում է հիմնական փուլեր.

- ✓ կազմակերպչական. Սա երեխաների աշխատանքային միջավայրին նախապատրաստումն է՝ բառարանների, հուշաթերթիկների բաշխում, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթացքում: Աշխատանքային միջավայրի նախապատրաստումը կարևորագույն պայման է արդյունավետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար:
- ✓ նախապատրաստական. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամ մեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին հանգիստ նստել, չխանգարել իր ընկերներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել և այն, այսինքն՝ այն ամենը, ինչը կապահովի աշխատանքի արդյունավետությունը:

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում:Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը,դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները:Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին:

Հատկապես տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական երաշխավորություններ, հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները:

Ինքնուրույն աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով:Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, և , վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն:Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ:Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին:

Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված առաջադրանքները ցանկալի է, որ աշակերտներից պահանջեն կամային ջանքեր:

Ինքնուրույն աշխատանքի համար ցանկալի է առաջադրել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների կիրառում նոր իրավիճակներում: Միայն այդ դեպքում ինքնուրույն աշխատանքը կնպաստի սովորողների ճանաչողական ունակությունների ձևավորմանը և նախաձեռնողականության դրսևորմանը:

Ցանկալի, որ ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները հետաքրքրեն սովորողներին:

Առաջադրանքների բովանդակությունը պետք է մատչելի լինի աշակերտին, հենված լինի երեխաների կենսափորձի վրա, բայց միևնույն ժամանակ գտնվի նրանց զարգացման «մերձագոտում», պարունակի որոշակի դժվարություն, որը երեխան կարող է հաղթահարել:

Յուրաքանչյուր թեմայի շուրջ առաջադրանքների ընտրության ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել հասկացության բոլոր հատկանիշների բազմակողմանիորեն

ամրապնդմանը, հստակ առանձնացնել այն կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ է ձևակերպել և ամրապնդել:

Կիրառելով սովորողների ինքնուրույն գործունեությունը կազմակեպելու զանազան մեթոդներ և հնարներ՝ չպետք է մոռանալ , որ աշակերտին հարկավոր է նախապատրաստվել համապատասխան գործունության կատարմանը:Հակառակ դեպքում նրա աշխատանքում արդյունավետություն արձանագրել հնարավոր չէ:

Սովորողների ինքնուրույն գործունեության հմտորեն կազմակերպումը կօգնի նրանց յուրացնելու առարկայական անհրաժեշտ գիտելիքներ, տիրապետելու համապիտանի ուսումնական կարողություններին և պատրաստ լինելու ստեղծագործական ակտիվ ուսումնառության:

## *Հետազոտության արդյունքների վերլուծություն*

Երեխան մայրենի լեզվի կրողն է: Նա լավ թե վատ, ճիշտ թե սխալ անընդհատ հաղորդակցվում է, ճանաչում ինքն իրեն, արտահայտում իր մտքերը, փորձում հասկանալ ու հասկանալի լինել: Մայրենի լեզվի ուսուցում ասվածը պայմանական է, քանզի մարդն այն յուրացնում է ամբողջ կյանքի ընթացքում:

Հետազոտության թեմայի բովանդակային միջուկն էլ՝ ինքնին, կապում է քննարկված նորագույն ուսուցման մեթոդը հենց մայրենիի դասերին:

«Հացը սուրբ է», «Աշունը մեր այգում» թեմաներով ՝ նախագիծային ուսուցման մեթոդով, 3-րդ դասարանում կատարված աշխատանքի սեղմագիրը քննարկենք ստորև:

Խնդիր-պրոբլեմ ՝ ինչպե՞ս է ստեղծվում հացը և ինչի՞ համար է այն հարկավոր մարդուն:

Նպատակը՝ մեծահասակի հետ միասին հավաքագրել տեղեկատվություն, թե ինչպե՞ս է հացը հասնում մեր սեղանին, կարողանալ հաջորդական վերլուծություն կատարել, հետազոտել, կատարել եզրահանգումներ, ապացուցել գաղափարները և արտացոլել վերջնարդյունքի / պրոդուկտի/ տեսքով:

Տեղեկատվության ձեռք բերման միջոցներ, աղբյուրներ- մեծահասակներ, դաստիարակ, ծնող, մասնագետ, տեսանյութեր, համակարգիչ, հեռուստացույց , նկարներ, գրքեր , դիտումներ, ուսումնասիրություններ, էքսկուրսիա:

Վերջնարդյունք՝ ներկայացում, լուսանկարում, հացաբուլկեղենի պատրաստում, գրքույկների ստեղծում, աշխատանքների ցուցահանդես:

Հետազոտական աշխատանքի I փուլ- նախապատրաստական / տարբեր հարցերի միջոցով պարզում ենք, թե ի՞նչ գիտենք և ի՞նչ չգիտենք թեմայի վերաբերյալ/ օրինակ՝ ի՞նչն է բացակայում նախաճաշի սեղանից: Որտեղի՞ց ենք վերցնում հացը: Ի՞նչ է հացը: Որտեղի՞ց է առաջացել : Ի՞նչ կարող ենք պատմել հացի մասին: Որտե՞ղ է թխվում հացը: Ովքե՞ր են թխում հացը: Ի՞նչ հացի տեսակներ կան... Որտեղի՞ց կարող ենք իմանալ ամեն ինչ հացի մասին/ տեղեկատվության հավաքագրում/ գնալ հացի գործարան. հարցնել վաճառողին. հարցնել ծնողներին/ մեծահասակներին. իմանալ գրքերից, նկարներից. համակարգչից, հեռուստացույցից. Ինքնուրույն փորձեր կատարել/ փորձել հաց թխել...

II փուլ-տեղեկատվության հավաքագրում: Երեխաները ծնողների օգնությամբ պատրաստում են գրքույկներ հացի մասին. գտնում են ասույթներ, ասացվածքներ,

բանաստեղծություններ: Պատմություններն ու հեքիաթները պատկերում են նկարներով: Ինքս վարել եմ զրույց հացի ստեղծման մասին «Հասկից մինչև հաց», «Մեր հայկական լավաշը» թեմաներով՝ դասղեկի ժամին:

Երեխաները դիտել են նաև մուլտֆիլմեր «Կախարդական լավաշ», «Պատմություն աղջկա մասին, որը տրորել էր հացը»: Կազմել են հացի ստեղծման տեխնոլոգիայի ալգորիթմ, Էքսկուրսիա ենք գնացել հացի գործարան/նախնական զրույց՝ ի՞նչ է հացի գործարանը, ինչպե՞ս են պատրաստում հացը, որտե՞ղ են թխում լավաշը, ովքե՞ր են թխում.../ Ի՞նչ մեքենաներ են աշխատում հացի ստեղծման համար: Նրանք օգնել են հացթուխին թխել հացաբուլկեղեն, ի՞նչ մթերք է հարկավոր եղել փոխանցել են իրար, համագործակցել: Նկարագրել են թխման տեխնոլոգիան և ներկայացրել: Անձնական փորձի միջոցով՝ պատրաստել հացաբուլկեղեն / նկարագրել ընթացքը:

Աշխատանքի արդյունք - Ի՞նչ իմացանք հացի մասին, եկեք հիշենք ամեն ինչ սկզբից: Ինչի՞ց սկսեցինք հետազոտությունները: Որտեղի՞ց իմացանք նորություններ հացի մասին: Ի՞նչ իմացանք մեծահասակներից, գործարանից, խանութից, համակարգչից, գրքերից, նկարներից... Ո՞ր մեքենաներ են մեզ օգնում: Ի՞նչ սովորեցինք թխել: Ի՞նչ ստեղծագործությունների ծանոթացանք: Երեխաները ցուցադրեցին իրենց ստեղծած գրքույկները, պատմեցին ներկայացրած նկարների մասին: Երաժշտության դաստիարակի հետ ներկայացրին սովորած երգերը հացի վերաբերյալ:

Նախագիծը պարտադիր պետք է ունենա գրված մաս՝ հաշվետվություն աշխատանքի ընթացքի մասին, որտեղ նկարագրված են աշխատանքի բոլոր փուլերը (սկսած նախագծի խնդրի առաջադրումից), նրանց վրա հիմնված բոլոր որոշումները, առաջացած բոլոր խնդիրները, դրանց հաղթահարման միջոցները, վերլուծվում է հավաքված տեղեկատվությունը, գիտափորձերի անցկացումը և դիտումը, իմի են բերվում հարցումների արդյունքները, արվում են եզրակացություններ, պարզաբանվում են նախագծի հեռանկարները:

3-4-րդ դասարաններում կազմակերպվող նախագծային գործունեության առանձնահատկությունն այն է, որ դրանք անհատական, զույգերով, խմբային, կոլեկտիվ խմբային առաջադրանքներ են, որոնք դպրոցին հնարավորություն են տալիս դասի ընթացքում կատարվող ուսումնական գործունեությունից անհատապես անցում կատարել զարգացման արդիական փուլից դեպի զարգացման մերձավոր գոտի: Խմբերից յուրաքանչյուրը կարող է աշխատել նախագծային աշխատանքի որևէ մասի, որևէ հարցի, կամ խնդրի շուրջ:

Իմ դասավանդման պրակտիկայում նախագծման ուսուցմամբ իրականացրել եմ նաև դասընթաց «Աշունը մեր այգում» թեմայով 3-րդ դասարանում:

Հաշվի առնելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները և ցուցաբերելով անհատական մոտեցում, միաժամանակ ստեղծելով ուսուցիչ-աշակերտ համագործակցային մթնոլորտ՝ կատարել ենք դերային բաժանում և աշխատանքի բաշխում: Նախագծի նպատակն էր բացահայտել աշունը և նրա գեղեցկությունը: Քանի որ տարրական դասարաններում ուսումնական առարկաների թիվը սահմանափակ է և ըստ այդմ՝ ակադեմիական գիտելիքները՝ սահմանափակ, մենք որոշեցինք որպես նպատակ ընտրել աշնան գեղագիտական կողմը: Մեր նախագծային մեթոդի խնդիրներն էին՝

- ✓ Բնագիտական և բնապահպանական գիտելիքների և հմտությունների զարգացում
- ✓ Գրագետ խոսքի կարողությունների զարգացում
- ✓ Տեղեկություններ հավաքելու և տարածելու հմտության զարգացում
- ✓ Գեղագիտական ճաշակի ձևավորում
- ✓ Ստեղծագործական մտքի զարգացում
- ✓ Աշխատանքների կազմակերպչական հմտությունների ձևավորում
- ✓ Նոր գիտելիքների ձեռքբերում

Որոշեցինք նախագիծը իրականացնել ամառանոցային միջավայրում, որտեղ կար այգի՝ մրգատու ծառերով: Այգում կային տարբեր մրգատու ծառեր՝խնձորենի, տանձենի, սալորենի, կեռասենի, ծիրանենի և այլն, կային նաև բարդիներ: Աշակերտները բաժանվեցին երկու խմբի, և յուրաքանչյուր խումբ իր անդամներին հանձնարարում էր որոշակի աշխատանք:

Նախագծային աշխատանքը կատարելիս ակնառու էր այն փաստը, որ խմբերից յուրաքանչյուրը արագ կողմնորոշվեց խմբի ղեկավար ընտրելու հարցում, որն ուղղորդում էր աշխատանքը (բնականաբար ուսուցչի հսկողությամբ և անմիջական միջնորդությամբ): Առաջին խմբի խնդիրը աշնանային գեղեցիկ և բազմագույն տերևներն էին, իսկ երկրորդ խմբինը՝ այգում աճող անուշահամ մրգերը: Նպատակը մասնավորապես տերևները և մրգերը հնարավորինս «ներկայացնելն էր»: Հետաքրքիր էր հետևել աշակերտների՝ աշխատանքի բաժանման ընթացքին, որտեղ ակնհայտ էր յուրաքանչյուր աշակերտի դերը, ունակությունների ներուժը: Դասարանում ունեինք ծույլ աշակերտ, որն ամեն կերպ խուսափում էր աշխատելուց, սակայն հաշվի առնելով այն փաստը, որ Մկրտիչը նաև փոքր-ինչ շատակեր է, մենք գտանք նրան աշխատեցնելու միջոցը. Նրան հանձնարարվեց

ևս մեկ աշակերտի հետ մրգեր հավաքել: Այսպիսով բոլորն ունեին հստակ հանձնարարություն, հստակ նպատակով: Խմբերը պայմանականորեն անվանեցինք՝ Տերևների և Մրգերի: Տերևների խումբը պետք է հավաքեր տարբեր ձևի տերևներ, դրանց մասին ներկայացներ ռեֆերատներ, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելով՝ տերևներով ձևավորեր գեղեցիկ կոմպոզիցիա: Մրգերի խումբը պետք է հավաքեր մրգերը, տեսակավորեր դրանք, դրանց մասին ներկայացներ ռեֆերատներ՝ օգտակարության մասին, ինչպես նաև ներկայացներ խոհարարական ձևավորմամբ՝ կազմակերպելով հյուրասիրություն:

Վերջում երկու խմբերը պետք է համագործակցեին՝ բեմադրելով փոքրիկ ներկայացում աշնան մասին, ինչպես նաև ընթերցեին աշնան մասին ստեղծագործություններ՝ թե՛ իրենց, թե՛ այլ գրողների հեղինակած:Առավել հետաքրքրական էր երեխաների բացահայտումը այն հակասության շուրջ, որ աշնանը պտղատու ծառերի մի մասը մրգառատ էր (խնձորենի, տանձենի, սալորենի), մյուս մասը՝(կեռասենի, ծիրանենի) ոչ: Հակասությունը հետաքրքրության նոր ալիք բարձրացրեց և ըստ այդմ հետազոտական նոր աշխատանքների սկիզբ:

Կատարված նախագծային աշխատանքները կարճաժամկետ էին՝ հաշվի առնելով մեթոդի նոր լինելը և աշակերտների գիտելիքների մակարդակը:

# *ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*

*Այսպիսով՝ ուսումնական նախագիծը ուսուցչի կողմից կազմակերպված և աշակերտների կողմից իրականացվող գործողությունների ամբողջությունն է:* Դասավանդողի դերը նախագծի իրականացման տարբեր փուլերում կարող է փոխվել: Բոլոր փուլերում էլ նա հանդես է գալիս որպես խորհրդատու, օգնական: Նա գիտելիքներ չի փոխանցում, այլ ապահովում է սովորողի ինքնագործունեությունը, այսինքն՝խորհուրդներ է տալիս, հետևում է ընթացքին, ուղղորդում է: Ուսուցչի համար ուսումանական նախագիծը զարգացման ինտեգրված դիդակտիկ միջոց է, ուսուցում և դաստիարակում, որը թույլ է տալիս զարգացնել նախագծային հատուկ կարողություններ ու հմտություններ՝ խնդրի առաջադրում, նպատակամղվածություն, իրականացվելիք պլաններ, վերլուծություն, ինքնաներկայացում, ինչպես նաև՝ տեղեկատվության որոնում, ակադեմիական գիտելիքների օգտագործում՝ ըստ նշանակության, ինքնակրթություն, հետազոտական և ստեղծագործական գործունեություն:

Ուսուցչի դերը նախագծային մեթոդը կիրառելիս անգնահատելի է՝ հատկապես տարրական դասարանում: Հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները՝ կարծում եմ տարրական դասարանի աշակերտները դեռևս չեն տիրապետում անհրաժեշտ այն կարողություններին, որոնց միջոցով իրականացվում է լիարժեք ուսումնական նախագիծ: Տարրական դասարանների առնչությամբ անհրաժեշտ է շեշտը դնել նախագծային գործունեության տարրերի վրա:

Նախագիծը պարտադիր պետք է ունենա պարզ, իրականացվելիք, հասանելիք նպատակ: Տարրական դասարաններում այն պետք է ունենա տարիքային առանձնահատկությանը բնորոշ հետաքրքրության որոշակի շրջանակ:

Հարկ է նշել, որ այս մեթոդը հնարավորություն է տալիս կրտսեր դպրոցականին բացահայտել և հասկանալ այն ոլորտն ու բնագավառը, որն առավել հետաքրքրական է իր համար և զարգացնել այն: Այն համախմբում է աշակերտներին մեկ նպատակի շուրջ, ձևավորում աշխատասիրություն, և աշխատանքի արդյունքը ներկայացնելու կարողություն ու հմտություն: Երեխաներից յուրաքանչյուրը մեծ ոգևորությամբ ու պատասխանատվությամբ էր կատարում իրեն հասանելիք աշխատանքը:

Այսպիսով՝ նախագծային գործունեության մեջ ինքնակրթության և ինքնազարգացման մեխանիզմը գործողության մեջ է դրվում ձևավորված ակտիվ ճանաչողական

հետաքրքրությունների և անձի զարգացման մակարդակի միջև առկա հակասությունների միջոցով: Այդ հակասությունը ծնվում է հետաքրքրությունները բավարարելու պահանջից: Նախագծային մեթոդն էլ թերևս նպաստում է հետաքրքրությունների առաջացման և դրանց բավարարման ճանապարհների մշակմանն ու հաղթահարմանը:

**Ամփոփագիր՝** Սովորողի համար նախագիծը սեփական ստեղծագործական պոտենցյալը հնարավորինս բացահայտելու հնարավորություն է: Դա գործունեություն է, որը թույլ է տալիս արտահայտվել անհատապես կամ խմբով, փորձել սեփական ուժերը, կիրառել ունեցած գիտելիքները, օգուտ բերել, հրապարակորեն ցույց տալ արդյունքը:

# Օգտագործված գրականության ցանկ


1. Միրաբյան Լուսիկ Սեյրանի «Գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակի վերահսկման տեսակները և ձևերը կրտսեր դպրոցականի ուսուցման գործընթացում» Ե2014
2. ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ «Մանկավարժություն» Ե2008
3. Թութունջյան «Կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունները» Ե1962թ.
4. Ստուպնիցկայա «Ի՞նչ է ուսումնական նախագիծը»
5. «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես Ե2015թ.
6. Կ. Թորոսյան, Ա. Բալայան, Կ. Չիբուխչյան «Մայրենիի դասերի պլանավորումը» Ե2016թ.
7. Ամիրջանյան Յ.Ա. «Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ»
8. https://kznakgnahatum.blogspot.com/p/blogpage_11.html?fbclid=IwAR10i3b-BICBjGD_Q1HrBCE7nXctiEuXqMxJl7rQIvPtn-4o3NbwmHhLvHc
9. ttps://multiurok.ru/files/ink-nowrowynowt-yan-dzevavorowme.html